ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ԿԱՄ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

https://doi.org/10.59982/18294359-23.14-pk-04

Արմինե Սարգսի Մատենցյան
ՀԵՀ, Զբոսաշրջության և սպասարկման ամբիոն
matentsyana@gmail.com

Ամփոփագիր

Հոդվածում դիտարկվում է զբոսաշրջության մի հայեցակարգ, որը գործնականում կիրառվում է «փորձառական ճանապարհորդություն» կամ «այլընտրանքային տուրիզմ» անվանումներով: Զբոսաշրջության զարգացման որոշակի փուլում սկսեցին հայտնվել ավանդականներից ակնհայտորեն տարբերվող առաջարկներ՝ այսպես կոչված «հակատուրիզմի» ձևաչափեր: Սրանք քիչ հայտնի զբոսաշրջային ուղղություններով, զանգվածային զբոսաշրջության երթուղիներից և տեսարժան վայրերից հեռու իրականացվող ճանապարհորդություններ են, որոնց կարևորագույն արժեք է հռչակվում ճանապարհորդի կողմից ոչ ստանդարտ փորձի ստանալը: Ճանապարհորդության այս ձևաչափը, որը որպես հայեցակարգ ձևակերպվեց Ժոել Անրիի կողմից 1990 թվականին, դարձավ զբոսաշրջային ծառայությունների անհատականացման այժմ թափ հավաքող երևույթի առաջին դրսևորումը: Ժամանակակից արտասահմանյան գրականության մեջ հայեցակարգը գտնում է իր հետազոտողներին: Կարելի է ասել, որ այսօր ձևավորվել է փորձառական տուրիզմի ձևերի բազմազանությունը նկարագրող հասկացությունների բավականին լայն շրջանակ, որոնց մի մասը քննարկվում է հոդվածում: Ամփոփվել են փորձառական ճանապարհորդությունների առկա առաջարկները և բացահայտվել են դրանց ավելի քան 30 ձևեր՝ միավորված տուրիզմի 8 տեսակի մեջ: Հոդվածում ձևակերպվել են նաև փորձառական ճանապարհորդության հիմնական սկզբունքները և դիտարկվել են շուկայում դրա դիրքավորման որոշ խնդիրներ: Քննարկվել է փորձառական ճանապարհորդությունների ձևերի ժամանակագրական վերափոխման միտումը, որը դրսևորվում է «այլընտրանքային» հասկացությունից՝ «հայեցակարգային» զբոսաշրջության գաղափարին անցումով:

Հիմնաբառեր. փորձառական ճանապարհորդություն, այլընտրանքային տուրիզմ, ընկղմում միջավայրի մեջ, ոչ ստանդարտ փորձառություն, զբոսաշրջության հայեցակարգային միտումներ:

Ներածություն

Զբոսաշրջության մեջ այսօր ավելի ու ավելի տարածված են զբոսաշրջավայրերը, ճանապարհորդական գաղափարներն ու զբոսաշրջային առաջարկները, որոնք շուկայում դիրքավորվում են որպես ոչ թե զանգվածային, այլ «հակազբոսաշրջային» ճանապարհորդական ձևաչափեր: Այլընտրանքային նպատակներով հայտնի տեսարժան վայրեր այցելելը կամ առհասարակ ոչ ստանդարտ

զբոսաշրջային ուղղություններ գերադասելը, դասական էքսկուրսիոն ծրագրերի փոխարեն բոլորովին նոր փորձ և անսովոր տպավորություններ նախընտրելը՝ այս ամենը մեր օրերում զբոսաշրջության ոլորտի զարգացման կարևոր միտում է կազմում:

Տեղացիների տներում հյուրընկալվելը և փոխանակման համակարգով ուղևորությունները այլևս նորություն չեն դեստինացիայի մշակույթի և հասարակության մեջ ընկղմվելու սիրահարների համար: Այժմ այս ուղղությունները գնալով ավելի տարածված են դառնում, և նման ճանապարհորդությունների նոր ձևաչափեր են ի հայտ գալիս: Կան ծրագրեր, որոնք թույլ են տալիս միաժամանակ կատարել կամավորական գործառույթներ և ճանապարհորդել: Օրինակ, շատ երկրներում գործող Au Pair ծրագիրը [*AuPairWorld*] երիտասարդներին թույլ է տալիս ապրել մեկ այլ երկրում՝ հյուրընկալող ընտանիքում որևէ տնային աշխատանք կատարելով (տան տերերի երեխաների խնամք և այլն) և որպես փոխհատուցում ստանալով սնունդ, կացարան, գրպանի գումար, դասընթացներում ընդունող երկրի լեզուն սովորելու, ինչպես նաև տեղական մշակույթին ծանոթանալու հնարավորություն: Կամ WWOOF շարժումը, որը միավորում է ֆերմերներին և գյուղատնտեսական աշխատանքներ կատարող կամավորներին ամբողջ աշխարհում [*WWOOF*]:

Թերևս այսօր համաշխարհային զբոսաշրջության ամենահետաքրքիր համակարգային միտումը փորձառական ճանապարհորդության պահանջարկն է, որը սովորաբար նախատեսված է ավելի ընկղմող, աուտենտիկ կամ վավերական, ակտիվ և/կամ արկածային ճանապարհորդության գաղափարը փոխանցելու համար: Զբոսաշրջիկները գնալով հեռանում են ստանդարտացված փաթեթային տուրերից՝ հօգուտ անհատականացված առաջարկի, որը թույլ է տալիս նրանց ճանապարհորդել ավելի խորը զգացմունքային մակարդակով:

Ավելին, արդյունաբերությունում սկսել են գիտակցել և իրագործել զբոսաշրջային փորձի անհատականացման միտումը: Առաջադեմ զբոսաշրջային ընկերությունները ձգտում են զբոսաշրջիկներին տրամադրել հենց այդպիսի փորձ՝ կենտրոնանալով հիմնականում երեք բաղադրիչների վրա՝ ոգեշնչում, անհատականացում և ինքնաբացահայտման հնարավորություն [*Rafat*]: Ընդ որում, տեսական ուսումնասիրություններն այնքան էլ շատ չեն, ինչպես նաև ընկղմող ճամփորդությունների կուտակված փորձը մեթոդապես ամբողջացնելու փորձերը: Հետևաբար, այս հոդվածի նպատակն է բնութագրել ոչ ստանդարտ ճանապարհորդությունների հայտարարված միտումը, հիմնավորել «փորձառական ճանապարհորդություն» (experiential travel) եզրույթը, ուսումնասիրել դրա առաջացումը և տուրիզմի այս ձևի տեղը ժամանակակից զբոսաշրջության և հյուրընկալության ոլորտում: Ուստի կարևոր է դիտարկել այս հայեցակարգի տարբեր ասպեկտները, որոնք առկա են զբոսաշրջային գործունեության պրակտիկայում, ինչպես նաև հիմնավորել «փորձառական տուրիզմ» տերմինը գիտական տեսանկյունից և փորձել դասակարգել դրա ենթաձևերը:

Հասկացության ձևավորման պատմական ակնարկ

«Փորձառական տուրիզմ» հասկացությունն ի հայտ եկավ 1990 թվականին, երբ ֆրանսիացի լրագրող Ժոել Անրին (Joël Henry) Ստրասբուրգում հիմնեց փորձառական զբոսաշրջության Latourex լաբորատորիան՝ համախոհների յուրահատուկ մի ակումբ, որը կոչված էր ձևավորելու ճանապարհորդությունների նոր փիլիսոփայություն: Անրին համոզված էր, որ Latourex-ը ոչինչ չի վաճառելու՝ ոչ մի ծառայություն, ոչ մի ապրանք, անկախ

նրանից, թե որքան պահանջված են դրանք: Իր գաղափարների մեծ մասը հիմնված էր անվճար այցելության սկզբունքների վրա: Անրին կարծում էր, որ զբոսաշրջային ճանապարհորդությունը զբոսաշրջիկի համար պետք է բացահայտում լինի, և սա ավելին է, քան պարզապես որևէ երկրի տեսարժան վայրեր դիտելը: Բացի այդ, այսպես կոչված «զբոսաշրջային թակարդներ» այցելելը (զբոսաշրջիկների համար հատուկ կազմակերպված և սարքավորված տեսարժան վայրեր, տարածքներ և այլն) երկիրը բացահայտելու ամենավատ ճանապարհն է, քանի որ այնտեղ շատ քիչ են տեղացիները, գրեթե ներկայացված չեն ավանդույթները և բացակայում է կյանքի իսկությունը: Անրիի գաղափարի համաձայն՝ փորձառական զբոսաշրջությունը ճանապարհորդության այլընտրանքային ձև է, որտեղ ուղղությունները ընտրվում են ոչ թե իրենց ստանդարտ տուրիստական արժանիքների, այլ ինչ-որ գաղափարի կամ փորձի հիման վրա: Փորձառական զբոսաշրջությունը հիմնված է այն փաստի վրա, որ ճանապարհորդությունը դառնում է խաղ, որի ժամանակ այցելուն փորձարկում է տարածությունը և շրջակա միջավայրը ճանաչելու անսովոր ձևը՝ ընկղմվելով դրա մեջ: Զբոսաշրջության փորձառական ձևերի խաղային բնույթը կարմիր թելի պես անցնում է Ժոել Անրիի ողջ հայեցակարգի միջով [*Henry, 49-51*]:

Այսպիսով, կարելի է առանձնացնել Ժոել Անրիի առաջարկած փորձառական տուրիզմի հիմնական սկզբունքները՝ ոչ ստանդարտ ճամփորդական փորձ, անսովոր նպատակ, որը միավորում է մասնակիցներին նոր վայրին ծանոթանալու հեռանկարի շուրջ, գործընթացի մեջ ընկղմվելը և նոր զգացմունքային փորձառությունները, ինքնամփոփումը և արդյունքների քննարկումը համախոհների հետ:

Մեր օրերում Անրիի առաջարկած շատ գաղափարներ հաջողությամբ դրամայնացվել են էքսկուրսիաների և փորձառական տուրերի տեսքով: Ավելին, փորձառական ճանապարհորդության գաղափարները դառնում են զբոսաշրջային հոսքերի կառավարման գործիք և զբոսաշրջային մոտիվացիա ու պահանջարկ ձևավորելու հնարավորություն, որոնք օգտագործվում են տեղական իշխանությունների կողմից դեստինացիաների պլանավորման և տարածքային զարգացման համար:

2005 թվականին Ռեյչել Էնթոնիի հետ Ժ. Անրին հրատարակում է "The Lonely Planet Guide to Experimental Travel" (Փորձառական ճանապարհորդության ուղեցույց), որը դառնում է առաջին ոչ ստանդարտ ուղեցույցներից մեկը [*Antony, Henry*]: Ավանդական ուղեցույցը նախատեսված է զբոսաշրջիկին այցելավայրում կողմնորոշելու համար, օգնելու նրան ընտրել երթուղին տեսարժան վայրերի նկարագրության միջոցով: Փորձառական ճանապարհորդության ուղեցույցը չի պարունակում սովորական նկարագրություններ, այն զբոսաշրջիկին առաջարկում է ընդամենը վարկած, ճանապարհորդության գաղափար, դրա իրականացման մեթոդներ, անհրաժեշտ պայմաններ և սարքավորումներ: Իսկ զբոսաշրջիկ-փորձարարը կարող է ինքնուրույն ստուգել վարկածը՝ օգտագործելով ուղեցույցում առաջարկված մեթոդները: Ինչպես նաև, որպես վարկածի հիմնավորում, հեղինակները ներկայացնում են սեփական փորձի և ստացված արդյունքների նկարագրությունը:

Փորձառական տուրիզմը ժամանակակից գիտական գրականության մեջ

Ժոել Անրիի գաղափարները, որոնք հրապարակվել են "The Lonely Planet Guide to Experimental Travel" ուղեցույցում, կարող էին մնալ ընդամենը ընտրյալներին հետաքրքրող տարօրինակ կոնցեպտներ: Այնուամենայնիվ, մարդաշատ ուղղություններով և ստանդարտ հուշանվերներով զանգվածային զբոսաշրջու-

թյունից հոգնած հասարակության զարգացումը պայմանավորեց զբոսաշրջության փորձառական ուղղության աճող ժողովրդականությունը: Ճամփորդությունն ինքնին մարդու համար միշտ եղել է սովորական, առօրյա իրականությունից կտրվելու, իրեն նոր դերում փորձելու, ուրիշներից տարբերվելու միջոց: Սոցիալական ցանցերի զարգացումը հնարավորություն է տվել կիսվել այս փորձով: Արդյունքում շատերի համար հասանելի են դարձել հայտնի ուղղությունները, զանգվածների համար զբոսաշրջությունը դարձել է ժամանցի միջոց և արդեն դադարել է հաջողության և սոցիալական նշանակության որոշիչ գործոն լինել: Այսպիսով, սա մի կողմից հանգեցրել է նոր, անսովոր տեսարժան վայրերի և հանգստի տեսակների արժևորմանը, իսկ մյուս կողմից ձևավորել է ճանապարհորդների հատուկ խմբեր, որոնք սոցիալական ցանցերի շնորհիվ ստեղծում են այդ թրենդները: Այսպիսով, փորձառական տուրիզմը դարձել է իրական ֆենոմենոլոգիական միտում, որը շատ առումներով տարբերվում է Ժոել Անրիի մշակած բնօրինակ հայեցակարգից: Սակայն մինչ այժմ այն արժանի արտացոլում չի գտել գիտական աշխատություններում և ակնարկներում: Իր հատկություններով փորձառական զբոսաշրջությունը, որպես ստանդարտ զանգվածային ճանապարհորդության այլընտրանք, մոտ է «այլընտրանքային զբոսաշրջություն» հասկացությանը, երբեմն էլ այս երկու տերմինները փոխարինվում են «հակատուրիզմ» հոմանիշով:

Արտասահմանյան պրակտիկայում փորձառական ճանապարհորդությունները ուսումնասիրվում են որոշ վերլուծական կազմակերպությունների կողմից, օրինակ՝ Skift-ի: Վերջինիս փորձագետ Ս. Ռոբինսոնը կարծում է, որ «փորձառական ճանապարհորդությունը» ի սկզբանե ստեղծագործական է և ունի ցանկացած տարածք զբոսաշրջավայրի վերածելու ներուժ, և դրա առարկայական դաշտը գտնվում է տարբեր գիտակարգերի հատման կետում՝ մշակութային ուսումնասիրություններ, վարքագծային հոգեբանություն, աշխարհագրություն, տուրիստիկա և այլն, և ներկայումս չկա ակադեմիական գիտություն, որն ուսումնասիրում է զբոսաշրջության և էքսպերիմենտալիզմի հարաբերությունները [*Robinson, 14-17*]:

Ինչպես նշվեց վերևում, հրապարակումներում հանդիպող «փորձառական տուրիզմ» եզրույթի ամենամոտ անալոգը «այլընտրանքային տուրիզմ» հասկացությունն է, ուստի դիտարկենք վերջինի վերաբերյալ առկա տեսակետները՝ հասկանալու համար, թե արդյո՞ք այս երկու հասկացությունները կապված են, թե՞ դրանք տարբեր երևույթներ են:

RSCI eLibrary համակարգում հայտնաբերվել է 10258 արդյունք «այլընտրանքային տուրիզմ» հարցման համար, Google Scholar համակարգում՝ 17900 արդյունք: Դրանցից միայն մի փոքր մասն է հատկացված փորձառական զբոսաշրջության թեմային: Մասնավորապես, լայնորեն ուսումնասիրված է զբոսաշրջության գյուղական և էկոլոգիական ձևերի խնդիրը որպես այլընտրանքային զբոսաշրջության ուղղություն [*Фоменко, Ленкова*]: Որպես այլընտրանքային՝ տարբեր հեղինակներ հաճախ դիտարկում են զբոսաշրջության վիրտուալ և արկածային ձևերը, էնոտուրիզմը (գինու զբոսաշրջությունը), ինչպես նաև էթնիկ զբոսաշրջության որոշ տեսակներ [*Елохина*], [*Фоменко, Ленкова*]: Կան նաև մի շարք հրապարակումներ, որոնք նվիրված են անմիջապես այլընտրանքային տուրիզմի հայեցակարգի քննարկմանը [*Брасалес и др.*], [*Спорыхина*]:

Հեղինակների մեծ մասը համակարծիք է, որ այլընտրանքային տուրիզմը զանգվածային զբոսաշրջության հակապատկեր է, որն իր էությամբ մոտ է, եթե ոչ նույնական, կայուն

զբոսաշրջությանը: Համաձայն ՄԱԿ ԶՀԿ-ի, այլընտրանքային կարելի է համարել զբոսաշրջության բոլոր տեսակները, որոնք համապատասխանում են կայուն զարգացման գաղափարին, իսկ այլընտրանքային զբոսաշրջությունն ինքնին «զբոսաշրջության զարգացման և խթանման պլանավորված և կառավարվող ձև է, որում առկա է զբոսաշրջիկի և հյուրընկալողի մշակույթների, նպատակների ու ակնկալիքների մերձեցում, ինչը նպաստում է փոխըմբռնման ավելի բարձր մակարդակին, դեստինացիայի ավելի խորը ընկալմանը և զբոսաշրջային հետաքրքրությունների առավել ամբողջական բավարարմանը» [*UNWTO. Thesaurus on Tourism*]:

Կան նաև քննադատական տեսակետներ «այլընտրանքային տուրիզմ» հասկացության վերաբերյալ: Մասնավորապես, այն քննադատների կողմից դիտվում է որպես ոչ այլ ինչ, քան զանգվածային զբոսաշրջության բնույթից դժգոհողների նորաձև գաղափար [*Елохина, 89-93*]: Քննադատները պնդում են, որ այլընտրանքային զբոսաշրջությունը հստակ սահմանում չունի, և դրա այլընտրանքայինության չափանիշներն ու պարամետրերը պարզ չեն [*Cohen, 127-142*]:

Այսպիսով, կարելի է որոշակի եզրակացություն անել. «փորձառական տուրիզմ» եզրույթը, որը ներդրվել է 1990 թվականին Ժոել Անրիի կողմից, այսօր բավարար չի արտացոլվում գիտական գրականության մեջ. ռուսալեզու կոնտենտում թեմայի վերաբերյալ գտնվել է միայն մեկ գիտական հրապարակում [*Афанасьева, Афанасьев*], և այս թեմայով անգլերեն գիտական հրապարակումները շատ հազվադեպ են: Մինչդեռ գործնականում արագորեն զարգանում են զբոսաշրջության փորձառական ձևերը, որոնք այլ կերպ են կոչվում՝ «այլընտրանքային տուրիզմ», «հակատուրիզմ», «ինտելեկտուալ տուրիզմ», «հեղինակային տուրիզմ» և այլն:

Այլընտրանքային կամ փորձառական տուրիզմի գործնական ձևերը

Վերը բերված սահմանումներից մենք տեսնում ենք, որ այլընտրանքային տուրիզմը հաճախ դիրքավորվում է որպես կայուն զբոսաշրջության տեսակ: Գործնականում այն իրականացվում է լայն ձևաչափով, մասնավորապես, կարելի է նշել տեղական բնակչությանը օգնելու կամ վայրի բնության պաշտպանության ծրագրեր իրականացնելու կամավոր ճամփորդությունները, որոնք, մի կողմից, իսկապես կայուն զբոսաշրջության մեխանիզմ են, իսկ մյուս կողմից՝ մասնակիցների համար կրում են հստակ փորձառական բնույթ: Նաև այլընտրանքային զբոսաշրջության զարգացման համեմատաբար նոր միտում է համարվում այսպես կոչված «ետնախորշային տուրիզմը» (slum tourism, трущёбный туризм). որպես քաղաքային տուրիզմի տեսակ, այն ուղղված է աղքատության մասին գիտելիքների և դրա դեմ պայքարի միջոցների հանրահռչակմանը, և նման գործունեությունից ստացված հասույթն ուղղվում է օգնելուն տեղական համայնքներին, որոնց աղքատ, հետամնաց բնակավայրերը ցուցադրվում են զբոսաշրջիկներին: Մյուս կողմից, զբոսաշրջիկները, որոնք հանդես են գալիս որպես ետնախորշային տուրերի սպառողներ, հաճախ առաջնորդվում են ոչ թե աղքատներին օգնելու գաղափարով, այլ սեփական նյարդերը ջղաձգելու, սովորականից տարբերվող կենսամիջավայր տեսնելու, ծայրահեղ հույզեր զգալու ցանկությամբ: Մեկ այլ օրինակ կարող են լինել զբոսաշրջային այն առաջարկները, որոնք հիմնված են իմերսիվ կամ ընկղմող, սթորիթելինգի և առասպելացման տեխնոլոգիաների վրա (օրինակ՝ այցելություններ լեգենդների և միֆերի թանգարաններ և այլն) [*Afanasiev, Afanasieva, 27-49*]:

Փորձառական տուրիզմի ձև կարելի է համարել նաև ջեյլո զբոսաշրջության (Jailoo tourism) և բնիկ զբոսաշրջության (Indigenous tourism) դրսևորումները, որոնք գտնվում են զբոսաշրջության էթնիկ և էկոլոգիական տեսակների հատման կետում: Իրոք, շատ ճանապարհորդներ, ովքեր ձգտում են ապրել բնիկ մարդկանց մեջ, առաջին հերթին ցանկանում են վերապրել անսովոր փորձ, լինել այլ դերում, զգալ, թե ինչ է նշանակում հնարավորինս ներդաշնակ ապրել բնական միջավայրի հետ:

Հոդվածը պատրաստելու շրջանակներում խորը որոնում է իրականացվել Google և Yandex որոնողական համակարգերում, սոցիալական ցանցերում (Facebook, Instagram), զբոսաշրջային արձագանքների և ակնարկների հարթակներում (TripAdvisor, Otzovik և այլն)՝ օգտագործելով «այլընտրանքային» և «փորձառական» հիմնաբառերը՝ գումարած «զբոսաշրջություն», «զբոսաշրջության տեսակներ», «տուրեր», «շրջագայություններ» բառերը: Չհաջողվեց գտնել այնքան արդյունք, որքան սպասվում էր, թեև ստացված տեղեկատվությունը թույլ է տալիս որոշակի հետևություններ անել: Մասնավորապես՝ արձանագրվել են բազմաթիվ հեղինակային բլոգներ և տեղեկատվական ռեսուրսներ, որոնք ներկայացնում են հետաքրքիր գաղափարներ և առաջարկություններ ավանդական հանգստից, ծանոթ ուղղություններից և հանրահայտ տեսարժան վայրերից ձանձրացած ճանապարհորդների համար: Դրանցից մի քանիսը ներկայացվում են ստորև *(Տե՛ս Աղյուսակ 1):*

Աղյուսակ 1.

Հղում	Համառոտ նկարագրություն
www.transformational.travel	Transformational Travel Council – Փոխակերպող ճանապարհորդությունների խորհուրդ՝ միջազգային հասարակական կազմակերպություն է, որը խթանում է զբոսաշրջության այլընտրանքային ձևերը, հավաքում և ներկայացնում է ոչ ստանդարտ ճանապարհորդությունների կազմակերպման փորձը, խորհրդատվական օգնություն է տրամադրում զբոսաշրջային ընկերություններին և անհատներին
www.latourex.org	Ժոել Անրիի «Լատուրեքս» փորձառական զբոսաշրջության լաբորատորիայի (LATOUREX – Laboratory of Experiential Tourism) կայքը, որը ներկայացնում է փորձառական տուրիզմի գաղափարներ
https://purelifeexperiences.com	Հարթակ, որը հավաքում է անսովոր ճամփորդությունների դեպքերի ուսումնասիրությունները, որոնում է հետաքրքիր զբոսաշրջային արդյունք, որը փոխում է մարդու ստանդարտ ընկալումը, ոգեշնչում է ճանապարհորդներին անհատական մակարդակում՝ առաջացնելով խորը զգացմունքներ, այդ թվում՝ սթորիթելինգի (storytelling) էֆեկտների միջոցով

www.thealternativetravelguide.com	The Alternative Travel Guide by Sasha Naslin – Սաշա Նասլինի այլընտրանքային ճանապարհորդական ուղեցույցը, որը ներկայացնում է հեղինակի ճամփորդական փորձը, պարունակում է խորհուրդներ զբոսաշրջիկների համար, ինչպես նաև այլընտրանքային տուրիզմի կազմակերպման գաղափարներ
www.experientialstar.com	Կայք, որը դիրքավորվում է որպես ոչ ստանդարտ, արկածային զբոսաշրջային փորձառությունների անվճար հավաքածու: Ռեսուրսի այցելուները կարող են նաև օգնություն ստանալ իրենց դուր եկած ճանապարհորդությունը կազմակերպելու հարցում
www.roadjunky.com/1201/101-experimental-travel-ideas	101 Experimental Travel Ideas - Փորձառական ճանապարհորդության 101 գաղափար՝ ոչ ստանդարտ զբոսաշրջային գաղափարների և խորհուրդների բլոգ
www.nathab.com	Nat Hab – կազմակերպություն, որն ունի երկու նպատակ՝ բնության պահպանում Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հետ համագործակցությամբ և այդ նպատակով ճանապարհորդությունների կազմակերպում: Nat Hab-ի առաքելությունն է խորը փորձառությամբ էկոտուրիստական գործունեության կազմակերպումը, որի հասույթը ուղղվում է տեղական համայնքներին և վայրի բնությանն աջակցելուն

Ոչ ստանդարտ (այլընտրանքային) զբոսաշրջային փորձին նվիրված համացանցային ռեսուրսների օրինակներ

Այսպիսով, գործնականում զբոսաշրջության այլընտրանքային ձևերը, որոնք նպաստում են տարածքի կայուն զարգացմանը, կարելի է համարել փորձառական՝ զբոսաշրջային ոչ ստանդարտ փորձ ձեռք բերելու առումով: Հետևաբար, բոլոր տեսակի ակնարկներում «փորձառական» կոչվող ուղեցույցներն ու առցանց ռեսուրսները, զբոսաշրջության այլընտրանքային և փորձառական ձևերը հիմնականում խառնվում են և դիտարկվում որպես նույնական հասկացություններ: Օրինակ, Սաշա Նասլինի «Այլընտրանքային ճանապարհորդական ուղեցույցը» ոչ միայն բլոգ է և անսովոր ճամփորդությունների գաղափարների հավաքածու, այլ նաև առաջարկում է ռեսուրսներ դրանց իրականացման համար (ուղեբեռի պահասենյակների, հյուրատների, հոսթելների և ռեստորանների հասցեներ ու գներ, տեղական լեզուների ուսումնասիրության փորձագետների և անսովոր էքսկուրսիաներ կազմակերպող զբոսավարների կոնտակտային տվյալներ և այլն):

TripAdvisor-ում գտնվեց մի քանի առաջարկ ընկերություններից, որոնք իրենց դիրքավորում են որպես «հակատուրիստական», օրինակ՝ We Hate Tourism («Մենք ատում ենք զբոսաշրջությունը») [*We Hate Tourism*]: Նման ընկերություններն առաջարկում են շրջել քաղաքներում «ոչ տուրիստական» երթուղիներով, ծանոթանալ տեղի բնակիչների կողմից սիրված վայրերին, սակայն նրանց ծառայություններից օգտվող զբոսաշրջիկների ակնարկներում հաճախ հայտնվում են բացասական կարծիքներ, որ դրանք սովորական

շրջագայություններ և էքսկուրսիաներ են, բայց գերարժեք:

Խաղային բնույթը և ոչ ստանդարտ փորձառությունը շարժիչ ուժ են հանդիսանում էքսկուրսիոն արդյունքի նոր ձևաչափերի համար (քվեստային շրջագայություններ, հեղինակային շրջագայություններ, շրջագայություններ գերեզմանոցներով, կատակոմբներով, գետնանցումներով և տանիքներով): Եվ ինչպես այլընտրանքային և զանգվածային զբոսաշրջության դեպքում, այնպես էլ հեղինակային էքսկուրսիոն արդյունքը հակապոդ է գործում զանգվածային տեսարժան վայրերի կամ ստանդարտ թեմատիկ էքսկուրսիաների համար: Ստացված արդյունքների զգալի մասը հենց այլընտրանքային, հեղինակային էքսկուրսիաներն են, որոնց համար ձևավորվում են առանձին կայքեր՝ օրինակ Tripster-ը: Սակայն, այս հոդվածի շրջանակներում հեղինակային էքսկուրսիաների առանձնահատկություններն ու խնդիրները հնարավոր չէ դիտարկել որպես հայեցակարգային զբոսաշրջային և էքսկուրսիոն գործունեության ձևաչափ:

Փորձառական ճանապարհորդության հիմնական սկզբունքները

Փորձառական ճանապարհորդությունների առկա պրակտիկայի հիման վրա կարելի է առանձնացնել դրանց հիմնական սկզբունքներից մի քանիսը.

1) *Իսկություն.* իսկական փորձառական ճանապարհորդությունը դուրս է գալիս տեսարժան վայրերի մակերեսային դիտարկման շրջանակներից՝ կենտրոնանալու իսկության և ոգեշնչման վրա:

2) *Գիտակցված մոտեցում.* այլընտրանքային զբոսաշրջության կարևոր հատկանիշ է, որը հիմնված է այնպիսի տպավորությունների և հաճույքի ստացման վրա, որոնք դեստինացիայի միջավայրում խորասուզվելուն զգացմունքային արձագանքի արդյունք են: Միաժամանակ զբոսաշրջիկը գիտակցում է, որ հոգատար (չվնասող) այցը նպաստում է դեստինացիայի կայուն զարգացմանը:

3) *Իմերսիվություն կամ ընկղմվածություն.* զբոսաշրջային ճանապարհորդություն կատարելիս խորը ընկղմում բնության, մշակույթի, հասարակության հույզերի և կենցաղի մեջ:

4) *Ակտիվություն.* դեստինացիայի մթնոլորտում ամբողջությամբ ընկղմվելու համար ճանապարհորդները ակտիվ մասնակցություն են ունենում, այլ ոչ թե պարզապես դիտորդի դերում հանդես գալիս: Նրանք փնտրում են գործնական փորձ, շփվում են մարդկանց հետ, փորձում են լեզու սովորել կամ նոր հմտություններ ձեռք բերել:

5) *Փոխակերպող բնույթ.* քանի որ փորձառու ճանապարհորդներին ավելի շատ է հետաքրքրում այն վայրը, որտեղ նրանք գտնվում են, նրանք հաճախ ձեռք են բերում դրա շատ ավելի խորը ըմբռնում և կարեկցանքի զգացում սոցիալական և բնական միջավայրի խնդիրների նկատմամբ: Օրինակ, հաճախ են դեպքերը, երբ նրանք վերադառնում են արձակուրդից, որտեղ տեսել են վտանգված տեսակների պահպանման խնդիրներ, և սկսել են աշխատել այդ ուղղությամբ (կամ ավելի շատ նվիրատվություններ անել): Մտածողության այս փոփոխությունը փոխակերպող է, իսկ հանգիստը վերածվում է կյանքը փոխող փորձի:

6) *Կենտրոնացում տեղական համայնքների վրա.* մի կողմից, փորձառական ճանապարհորդության իրազեկումն ու խորասուզումը կենտրոնացնում է զբոսաշրջիկի ուշադրությունը տեղական համայնքների, նրանց մշակույթի, սոցիալական խնդիրների վրա, իսկ մյուս կողմից՝ ճանապարհորդության այս ձևաչափը աշխատատեղեր է ստեղծում տեղի բնակիչների համար, քանի

որ առանց զբոսաշրջային կրթության մարդը կարող է դառնալ զբոսավար-ուղեկցորդ, ներկայացնել իր արհեստն ու հմտություններ-ը, գումար վաստակել վարպետաց դասեր տալով և այլն:

7) *Կայունություն.* զբոսաշրջության փորձառական և այլընտրանքային ձևերը նպաստում են (ձգտում են դրան) տարածքի, դրա բոլոր համակարգերի կայուն զարգացմանը:

Տուրիզմի փորձառական ձևերի ընկալման և դիրքավորման խնդիրները

Ակնհայտ է, որ վերը թվարկված փորձառական ճանապարհորդության հիմնական նշանները հաճախ անորոշ են և դեկլարատիվ բնույթ ունեն: Ոչ ստանդարտ ճանապարհորդությունների առկա փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ կան զբոսաշրջության ոլորտում դրանց տեղը հասկանալու և ուղղությունների զարգացման գործում դրանց դերի հետ կապված մի շարք խնդիրներ, որոնցից առավել ցայտուն արտահայտված են հետևյալները.

1) Համացանցում թեգերի ուռճացված տերմինաբանական բազմազանությունը, որը հասկացությունների շփոթություն է առաջացնում, քանի որ այն տերմինների քանակը, որոնք նկարագրում են տվյալ երևույթը (փորձառական, այլընտրանքային, ինտելեկտուալ, տարաշխարհիկ, հեղինակային, ոչ ստանդարտ և այլն), չի նպաստում գաղափարի հստակ բյուրեղացմանը: Այդ իսկ պատճառով այլընտրանքային և փորձառական զբոսաշրջային գործունեության մեջ հաճախ ընդգրկում են զբոսաշրջության ցանկացած ոչ զանգվածային ձև, ներառյալ VIP հատվածը, էկոտուրիզմը, գյուղական և ագրոտուրիզմը և այլն:

2) Էքսպերիմենտալիզմը որպես հաջող մարքեթինգային տեխնիկա. «փորձառական» հայեցակարգը հաճախակի և լայնորեն օգտագործվում է այս կամ այն տուրի, զբոսաշրջային ծառայությունների մատուցման ձևերի համար՝ ուշադրություն գրավելով և ենթագիտակցորեն հաճախորդի մոտ ստեղծելով զբոսաշրջային պրոդուկտի յուրահատկության, անգամ բացառիկության ընկալում: Նման մոտեցումը չեզոքացնում է երևույթի իրական ըմբռնումը՝ այն դարձնելով հիմնականում հաջողակ մարքեթինգային հնարք:

3) «Հեղինակային տուրիզմ» և «փորձառական տուրիզմ» հասկացությունների անսահմանությունը. ակնհայտ է զբոսաշրջության այս ձևերի հստակ ըմբռնման և որևէ չափանիշի կամ հաստատված բնութագրական նշանների բացակայությունը, արդյունաբերության շատ փորձագետների կողմից այս երկու հասկացությունների նույնական մեկնաբանելը, մինչդեռ դրանք ունեն կազմակերպչական, հայեցակարգային, բովանդակային բաղադրիչների տարբերություններ:

4) «Անկայուն կայունության» խնդիրը [*Афанасьева, Афанасьев, 31*]. նկատվում է որոշակի հակասություն զբոսաշրջության այս ձևերի հայտարարված սկզբունքների և կայուն զարգացման հայեցակարգի փաստացի իրականացման միջև: Դրա ամենավառ օրինակը կարող են լինել Ջոմոլունգմա (Էվերեստ) վերելքներ առաջարկող բազմաթիվ զբոսաշրջային ծրագրերը, որոնք դիրքավորվում են որպես էկոտուրիզմի եզակի պրոդուկտ, որը հասանելի չէ բոլորին, նպաստում է էկոհամակարգերի պահպանմանը, բայց միևնույն ժամանակ այս լեռը վերածում են աշխարհի ամենաբարձր աղբավայրի, ուր վտանգավոր կենսագործընթացներ են զարգանում:

Կան նաև այլ խնդիրներ այլընտրանքային կամ փորձառական կոչվող զբոսաշրջության ձևերի թե՛ դիրքավորման, թե՛ իմաստային բովանդակության մեջ: Այստեղից էլ բխում է դրանց էական ըմբռնման վիճելիությունը, ինչպես նաև զբոսաշրջային ծառայու-

թյունների համակարգում դրանց տեղի անորոշությունը:

Փորձենք ամփոփել այսպես կոչված փորձառական (այլընտրանքային, ոչ ստանդարտ, փոխակերպող, ինտելեկտուալ և այլն) ճանապարհորդության գոյություն ունեցող հիմնական տեսակներն ու առաջարկները *(Տե՛ս Աղյուսակ 2):*

Աղյուսակ 2.

Փորձառական ճանապարհորդության տեսակները (ըստ հիմնական շարժառիթների)	**Փորձառական ճանապարհորդության իրականացման առաջարկվող ձևերը**
Համի փորձառություններ (Taste experiences) Ընկղմում տեղական մշակույթի մեջ գաստրոնոմիայի և ավանդական խոհանոցի միջոցով	▪ Խոհարարության վարպետաց դասեր ▪ Գաստրոնոմիական տուրեր և սննդի բազար-շոփինգ (գնումներ շուկաներից) ▪ Սննդի, գինիների և տնայնագործական խմիչքների համտեսում ▪ Մասնակցություն գաստրոնոմիական փառատոներին
Մշակութային և ոգեշնչող փորձառություններ (**Cultural & Inspiration experiences**) Ընկղմում տեղական մշակույթի մեջ նրա առանձնահատկությունների ուսումնասիրության միջոցով	▪ Մշակութային դասեր և սեմինարներ տեղական արհեստներ սովորելու, ավանդական հմտություններ ձեռք բերելու համար ▪ Աշխատանք տեղական համայնքներում, կամավորություն (մշակութային կամավորական տուրիզմ) ▪ Մասնակցություն փառատոներին, տեղական ավանդական տոներին ▪ Գրական շրջագայություններ ▪ Այլ ընկղմող իրադարձություններ և պրակտիկաներ
Հոգևոր փորձառություններ (Spiritual experiences) Ճամփորդություններ՝ հոգևոր պրակտիկաներին միանալու նպատակով	▪ Յոգա-ռեթրիտներ և մեդիտացիաներ ▪ Առողջության վերականգնման և դետոքս տուրեր ▪ Վեդայական տուրեր ▪ Շրջագայություններ՝ տեղական ավանդական ծեսերին և հավատալիքներին ծանոթանալու համար
Կրթաժամանցային փորձառություններ (Edutainment experiences) Ճանապարհորդություններ կրթական փորձի և նոր հմտությունների ձեռքբերման համար՝ տեղական սոցիալական միջավայրում ընկղմվելու միջոցով	▪ Դաշտային սեմինարներ, հանրամատչելի դասախոսություններ, հանդիպումներ գիտնականների, փորձագետների, հայտնի մեդիաանձանց հետ ▪ Վարպետաց դասեր (լուսանկարչություն, գեղանկարչություն, դարբնություն, բրուտագործություն, գորգագործություն, իկեբանա, օրիգամի, թեյախմության արվեստ և այլն) ▪ Լեզվի դասընթացներ տեղացիների հետ ▪ Հնագույն մարտարվեստների ուսուցում

Արկածային փորձառություններ (Adventure experiences) Արկածային զբոսաշրջություն՝ դեստինացիայի շրջակա միջավայրի մեջ (այդ թվում՝ բնական, բնապատմական) ակտիվ փոխազդեցությամբ ընկղմվելու միջոց	▪ Քվեստ-տուրեր (հատուկ սցենարներով մոդելավորված խաղային իրավիճակներ, որոնցում մասնակիցները պետք է ուսումնասիրեն շրջապատող աշխարհը և պատմությունը, որոնեն գանձեր, բացահայտեն գաղտնիքներ, լուծեն հանելուկներ, փրկվեն վտանգներից, մարզեն իրենց հիշողությունը, տրամաբանությունը, հնարամտությունը, ինտուիցիան և այլն) ▪ Էքստրեմալ զբաղմունքներ բնության գրկում (սկուբադայվինգ, առագաստային նավարկություն, վինդսերֆինգ, ռաֆթինգ և կայակինգ, զիփ-լայնինգ, բեյսջամփինգ, լեռնային և անտառային արշավներ, ժայռամագլցում և սքայրանինգ, լեռնային հեծանվավազք, ձիավարություն, սպելեոտուրիզմ, պարագլայդինգ և պարահոքինգ, արտաճանապարհային 4WD, գլեյդսքիինգ և այլն) ▪ Արտասովոր արկածներ (օրինակ՝ մարաթոն Չինական Մեծ պատի վրայով, տորնադոների «հետապնդում») ▪ Տիեզերական արկածներ (մարզումներ, թռիչքներ դեպի Երկրի ցածր ուղեծիր) ▪ Ռազմական տուրիզմ (ռազմական գործողությունների շրջաններ այցելելը) ▪ Վայրի բնության գրկում գոյատևման դասընթացներ
Հյուրանոցային փորձառություններ (Hotel experiences) Ճանապարհորդություն, որի շարժառիթը յուրահատուկ կենսափորձի համար արտասովոր հյուրանոցներում մնալն է	▪ Բնակություն ավանդական հյուրանոցներում, ինչպիսիք են ռյոկանները Ճապոնիայում, ժառանգության հյուրանոցները Հնդկաստանում, պարադորները Իսպանիայում, արևելյան ժողովուրդների յուրտները, քոչվոր բեդվինների «բեյթ ալ-շար» վրանները և այլն ▪ Բնակություն ստորգետնյա, քարանձավային, ստորջրյա և այլ արտասովոր հյուրանոցներում ▪ Բնակություն բնպահպանական գոտիներում ստեղծված էկո-հյուրանոցներում, որոնք լիովին ներդաշնակ են բնության հետ, և որոնց դիզայնը ինտեգրում է արտաքին միջավայրը ներքինին ▪ Բնակություն այսպես կոչված «էմպիրիկ» հյուրանոցներում, որոնք իրենց հյուրերին առաջարկում են տեղական մշակույթի հետ կապված փորձ (օրինակ՝ Հավայան կղզիներում գտնվող հյուրանոցները, որոնք հյուրերին առաջարկում են ուկուլելեի կամ հուլայի դասեր)

Բնության և շրջակա միջավայրի փորձառություններ (Nature & Environment experiences) Բնության և կենդանիների հետ էթիկական փոխազդեցություն՝ բնական միջավայրի վրա նվազագույն ազդեցությամբ	▪ Ֆոտո և վիդեո սաֆարիներ (վայրի կենդանիների նկարահանում) ▪ Թռչնադիտումներ, կենդանիների դիտումներ ▪ Այցելություն կենդանիների վերականգնողական կենտրոններ ▪ Էկոկամավորություն (մասնակցություն բնապահպանական ծրագրերին)
Էթնիկ և ազգագրական փորձառություններ (Ethnic and ethnographic experiences) Մշակութաճանաչողական տուրիզմի ուղղություն, որը կապված է բնիկների ավանդական բնակավայրերի, մարդաբանական արգելոցների այցելությունների և այնտեղ ապրելու հետ՝ ավանդական մշակույթի, սովորույթների և կենցաղի մեջ ընկղմվելու նպատակով	▪ Ճանապարհորդություններ դեպի ազգագրական գյուղեր և համալիրներ (ծանոթություն ավանդական մշակույթի և սովորույթների հետ) ▪ Ճանապարհորդություններ դեպի անթրոպոլոգիական արգելոցներ (ծանոթություն փոքրաթիվ, անհետացման եզրին գտնվող էթնիկ խմբերի, քաղաքակրթությունից հետ մնացած ցեղախմբերի ապրելակերպի հետ) ▪ Ջեյլո տուրիզմ / jailoo tourism (Կենտրոնական Ասիայի երկրներում լեռնային անասնապահների բնակավայրերի այցելություն) ▪ Աբորիգենային կամ բնիկների տուրիզմ / aboriginal, indigenous tourism (ծանոթություն «էկզոտիկ»/հեռավոր ժողովուրդների, պրիմիտիվ մշակույթ ունեցող համայնքների հետ: Ընդ որում, բնիկ ժողովուրդներն անմիջականորեն ներգրավված են զբոսաշրջության արդյունաբերության կազմակերպման մեջ, տրամադրում են կացարան և սնունդ, իրականացնում են էքսկուրսիոն ծրագրեր) ▪ Էթնո-հնագիտական տուրիզմ (պատմական հետահայացով ճանապարհորդություններ՝ էթնիկ մշակույթների համապարփակ ուսումնասիրության նպատակով, որտեղ շարժառիթը հետաքրքրությունն է պատմության, հնագիտության, ազգագրական ժառանգության և որոշակի տարածքի բնակչության հին ապրելակերպի նկատմամբ: Դա կարող են լինել գոյություն ունեցող կամ անհետացած մշակույթներ: Զբոսաշրջության ձևում կարևոր դեր են խաղում մշակութային լանդշաֆտները

Ժամանակակից պրակտիկայում ներդրված փորձառական զբոսաշրջային արդյունքի հիմնական տեսակներն ու ձևերը

Եզրակացություն

Մեր կարծիքով, այսօր կարելի է խոսել ոչ այնքան զբոսաշրջության փորձառական ձևերի մասին, քանի որ ելնելով առկա տեսակետների վերլուծությունից՝ զբոսաշրջության որոշ խոշոր ավանդական հոսանքներ իրենց էությամբ փորձառական են (օրինակ՝ յոգա-ռեթրիտները սակրալ զբոսաշրջության ենթաձև է, յուրտում ապրելը՝ էթնիկ զբոսաշրջության դրսևորում է, բերքահավաքի մասնակցելը՝

գյուղական զբոսաշրջության տարր է), այլ ավելի շուտ հայեցակարգային զբոսաշրջության մասին: Հայեցակարգային մոտեցումն ընդգծում է ճանապարհորդության միասնական գաղափարը, որի իրականացումը թույլ է տալիս ամբողջությամբ ընկղմվել դեստինացիայի սոցիալական կամ բնական միջավայրում, լրացնում է դրան՝ արտացոլելով զբոսաշրջային ռեսուրսների նկատմամբ ոչ գիշատիչ, ոչ սպառողական, խնայող, մեղմ ու պատասխանատու (և հետևաբար ոչ ստանդարտ) վերաբերմունքը: Հայեցակարգային մոտեցումը կենտրոնացած է այն գաղափարի վրա, որ ճանապարհորդը ձեռք է բերում նոր, ոչ սովորական փորձ: Սա ամենակարևոր արժեքն է, որը զբոսաշրջիկը ստանում է որոշակի տուրի ընթացքում, որտեղ ուշադրությունը կենտրոնացված է զանգվածային զբոսաշրջության հիմնական միտումներից դեպի հայեցակարգային ճանապարհորդություն անցում կատարելու վրա: Այս առումով կտրուկ փոխվում է զբոսաշրջային ապրանքի և ծառայության կազմակերպման, արտադրության և վաճառքի մոդելը: Ըստ Skift-ի վերլուծաբանի՝ “Free Report. The Rise of Experiential Travel” զեկույցի հեղինակի [*Rafat*], այսօր հիմնական միտումներից մեկը զբոսաշրջային ընկերությունների առաջացումն է, որոնք իրենց դիրքավորում են որպես «ճամփորդության դիզայներներ» (կամ այլ կերպ՝ ճամփորդության ռեժիսորներ, ճամփորդության մոդերատորներ, զբոսաշրջային զգացմունքների տնօրեններ և այլն), որոնց տարբերությունը ավանդական զբոսաշրջային օպերատորներից հանգում է զբոսաշրջային արդյունքի արտադրության տեխնոլոգիայի մանրամասներին, որտեղ հիմնական գաղտնիքը կայանում է նրանում, որ բոլոր տարրերը, նույնիսկ ամենափոքրն ու ամենաաննշանը, համադրվեն նոր, մանրակրկիտ մտածված ձևով [*Petzold. The Top 10…*]:

Այսպիսով, կարելի է ասել, որ «փորձառական ճանապարհորդություն» հասկացությունը, որն ի հայտ եկավ համեմատաբար վերջերս՝ 1990 թվականին, այսօր «այլընտրանքային տուրիզմ», «հակատուրիզմ», «հեղինակային տուրիզմ», «ոչ ստանդարտ տուրիզմ» և այլ նմանատիպ հասկացությունների միջոցով՝ այսպես կոչված «տպավորությունների տնտեսության» ինտենսիվ զարգացման համատեքստում, վերածվում է հայեցակարգային զբոսաշրջության, որը շատ վերլուծաբանների և փորձագետների կողմից դիտարկվում է որպես ոլորտի զարգացման կարևորագույն միտումներից մեկը:

COVID-19 համաճարակը, որը կտրուկ ընդհատեց զանգվածային ստանդարտացված զբոսաշրջության դարաշրջանը, նպաստեց այս միտման ավելի ցայտուն դրսևորմանը: 2022 թվականն այն տարին էր, երբ աշխարհը պաշտոնապես վերաբացվեց նախորդ երկու տարիների խիստ սահմանափակումներից և մարդկանց «տնային կալանքից» հետո: Եվ, ինչպես ցույց են տվել հետազոտությունները, 2022 թվականին սահուն կերպով շարունակեց զարգանալ քովիդի շրջանում ձևավորված միտումը, և այսօր զբոսաշրջության համաշխարհային շուկայում հայտնվում են ավելի ու ավելի շատ առաջարկներ՝ ուղղված անսովոր, ոչ տրիվիալ զբոսաշրջային փորձ ձեռք բերելու հետաքրքրությունը բավարարելուն: Նաև այս միտումը սերտորեն կապված է այն սերունդների հոգեբանական, վարքային, արժեքային-մոտիվացիոն բնութագրերի հետ, որոնք այսօր դառնում են զբոսաշրջային ադյունքի գերակշռող սպառողներ:

Այսպես, EarthWeb ռեսուրսների հայտնաբերման միջազգային հետազոտական հարթակում հրապարակված՝ երիտասարդ և միջին տարիքի զբոսաշրջիկների շրջանում անցկացված գլոբալ հարցումների արդյունքները վկայում են այն մասին, որ 2018 թվականին

հարցվածների 43%-ն էր ճամփորդելիս ավելի շատ նախընտրում անսովոր մշակութային կամ հոգեբանական փորձառությունը, քան որևէ նյութական արժեքների հետ ծանոթացումը, մինչդեռ 2023 թվականի սկզբին այդպիսի նախընտրություն դրսևորած ճամփորդողների թիվը կազմել է արդեն 72% [*EarthWeb. Travel Statistics 2023...*]:

WAM Global Growth Agents միջազգային մարքեթինգային հետազոտությունների հեղինակավոր գործակալության փորձագետների կողմից հրապարակված՝ «Զբոսաշրջության հաջորդ մեծ հեղափոխությունը» զեկույցում [*WAM GGA. The Next Great Tourism Revolution: A Report on Travel and Tourism Trends*] զբոսաշրջությունն այլևս դիտարկվում է իբրև «փորձառությունների տնտեսություն» (experience economy), իսկ համաշխարհային տուրիզմի զարգացման գլխավոր հայեցակարգային միտումներ են համարվում՝

1. դեստինացիայի իսկության (destination authenticity) բացահայտումը միջավայրում ընկղմվելու միջոցով,
2. «հակատուրիզմ» (antitourism) գաղափարի տարածումը,
3. բնիկ զբոսաշրջության (indigenous tourism) աճող պահանջարկը,
4. մարդուն փոխակերպող ճամփորդությունները (transformative trips),
5. եզակի կամ անկրկնելի փարձառությունները (one-of-a-kind experiences):

Վերոնշյալ զեկույցում տեղ է գտել այսպես կոչված «X», «Y» և «Z» սերունդների (Unknowns or Generation X - անհայտների կամ X սերունդ՝ «փորձառական տուրիզմ» երևույթի գեներատորներ; Millennials or Generation Y - հազարամյակի կամ Y սերունդ՝ «հակատուրիզմ» երևույթի գեներատորներ; Stay-at-home or generation Z - տնակյացների կամ Z սերունդ՝ հայեցակարգային տուրիզմի գեներատորներ) ներկայացուցիչների հարցման արդյունքը, ըստ որի.

1. Հարցվածների 29-35%-ը վերապրել են քովիդային, աշխարհաքաղաքական և/կամ տեղեկատվական ճնշումների հետ կապված հետտրավմատիկ համախտանիշը, որի պատճառով նախընտրում են հոգեկան ներդաշնակությունը վերականգնող փորձառություններով լի ուղևորություններ (psychedelic experience trips):
2. Ռեսպոնդենտների գրեթե կեսը (49%-ը) հրաժարվում են *տուրիստ* կոչվելուց (հակատուրիզմի ակնհայտ դրսևորում) և ցանկանում են կոչվել ճանապարհորդներ, ովքեր նախընտրում են ընկղմող, ինքնաբուխ փորձառություններ կամ ստեղծագործ և պատասխանատու (կայուն) ուղևորություն:
3. Եվ մոտ 53%-ը նախընտրում է գաղափարային փորձառություններ ապահովող և անձը խորապես փոխակերպող ճամփորդություններ: [*WAM GGA. The Next Great Tourism Revolution..., 108-109*]

Այս համատեքստում, իրապես նոր և յուրահատուկ փորձառություններ առաջարկող զբոսաշրջային արդյունքի մշակման համար, մեր օրերի ճանապարհորդների տարբեր սերունդների վարքագծային օրինաչափությունների ուսումնասիրությունը և նրանց որոշ խմբերի զբոսաշրջային շարժառիթների վերլուծությունը հանդիսանում է տուրիստիկայի հեռանկարային և խոստումնալից հետազոտական ուղղություն, որը կարող է դառնալ հայեցակարգային զբոսաշրջության զարգացման կարևոր խթան:

Գրականության ցանկ

1. **Afanasiev Oleg, Afanasieva Alexandra V.** “Museums of dark mythologies in the tourist place”. *In book:* Virtual Traumascapes and Exploring the Roots of Dark Tourism. Hershey, Pennsylvania: IGI Global, 2017. Pp. 26-49. (05. Dec. 2022) URL: https://www.researchgate.net/publication/320046655_Museums_of_Dark_Mythologies_in_the_Tourist_Place
2. **Antony Rachael, Henry Joël.** Lonely Planet Guide to Experimental Travel. Melbourne, Vic.; Oakland, CA: Lonely Planet, 2005. 276 p. (10. Dec. 2022) URL: https://openlibrary.org/books/OL8907388M/Lonely_Planet_Guide_To_Experimental_Travel
3. **Cohen Erik.** “Alternative tourism” – A Critique. *In:* Singh, T.V., Theuns, H.L. & Go, F.M. (eds). *Towards Appropriate Tourism: The Case of Developing Countries*. Frankfurt am Main, Peter Lang, 1989. Pp. 127-142. (01. Jan. 2023) URL: https://www.researchgate.net/publication/285551109_Alternative_Tourism-A_Critique
4. **EarthWeb.** “Travel Statistics 2023: Tourism, Business & Demographics”. (02. March. 2023) URL: https://earthweb.com/travel-statistics/
5. **Henry Joël.** “Tourisme expérimental: la ville comme terrain de jeu”. *L’Observatoire.* 2016. Vol.2. Iss.48. Pp. 49-51. (02. Jan. 2023) URL: https://www.cairn.info/revue-l-observatoire-2016-2-page-49.htm
6. **Petzold Christian.** “The Top 10 Experiential Travel Agencies from Around the Globe”. **(**08. Jan. 2023) URL: https://avidvoyagers.com/the-top-10-experiential-travel-agencies-from-around-the-globe/
7. **Rafat Ali.** “Free Report: The Rise of Experiential Travel”. Skift. Released: 03 June 2014. (15. Jan. 2023) URL: https://skift.com/2014/06/03/launching-free-skift-report-the-rise-of-experiential-travel/
8. **Robinson Shanna.** “Experimental travel in practice; as performance”. Thesis (Ph.D.). Western Sydney University, 2016. (30. Jan. 2023) URL: https://researchdirect.westernsydney.edu.au/islandora/object/uws:44844/
9. **United Nations World Tourism Organization.** “Thesaurus on Tourism and Leisure Activities”. Madrid: UNWTO, 2001. P. 803. (pdf)
10. **WAM GGA.** “The Next Great Tourism Revolution: A Report on Travel and Tourism Trends”. (28. Feb. 2023) URL: https://www.wearemarketing.com/uploads/media/default/0001/21/be54a5f27191d02797ff03aaacd4b799f25beb11.pdf
11. **WWOOF.** “Experience sustainable living on local organic farms & family homes worldwide!” (12. Feb. 2023) URL: https://wwoof.net/
12. **AuPairWorld.** “Find your au pair or host family – today!” (12. Feb. 2023) URL: https://www.aupairworld.com
13. **We Hate Tourism.** (20. Feb. 2023) URL: https://www.wehatetourismtours.com
14. **Афанасьева А.В., Афанасьев О.Е.** «Контексты экспериментального туризма в теоретическом и практическом форматах: компаративный анализ, разновидности и тренды». Современные проблемы сервиса и туризма. 2021. Т.15. №1. Сс. 21–33. (10, фев., 2023) URL: https://ru.calameo.com/read/00425107692a676de3273
15. **Брасалес Э.Д., Тапиа П.Х., Королева И.С. «**Альтернативный туризм как вид устойчивого туризма». Научный результат. Технологии бизнеса и сервиса. 2020. Т.6. №2. Сс. 3-19. (11, фев., 2023) URL: https://cyberleninka.ru/article/n/alternativnyy-turizm-kak-vid-ustoychivogo-turizma
16. **Елохина А.К. «**Перспективы и проблемы развития театрального туризма как альтернативного вида туризма на территории Волгоградской области». Проблемы и перспективы развития туризма в Южном федеральном округе: Сб. науч. тр. 2018. Сс. 89-93. (18, фев., 2023) URL: https://elibrary.ru/item.asp?id=39143413

17. **Спорыхина С.Н. «**Альтернативный туризм: вопросы терминалогии». Научный взгляд в будущее. ISSN 2415-766X (P)/ 2415-7538 (O). 2019. Т.2. №15. Сс. 64-68. (24, фев., 2023) URL: https://www.scilook.eu/index.php/slif/article/view/slif15-02-018/pdf15-02-018
18. **Фоменко Е.В., Ленкова М.И. «**Экономические аспекты развития альтернативных видов туризма: опыт зарубежных стран». Вестник Академии знаний. 2019. №1(30). Сс. 181-185. (28, фев., 2023) URL: https://cyberleninka.ru/article/n/ekonomicheskie-aspekty-razvitiya-alternativnyh-vidov-turizma-opyt-zarubezhnyh-stran

EXPERIENTIAL TYPES OF TRAVEL AS A MODERN DIRECTION OF THE CONCEPTUAL TOURISM DEVELOPMENT

Armine Matentsyan
EUA, Chair of Tourism and Service
matentsyana@gmail.com

Abstract

The article considers a concept of tourism, that is practically applied under the names "experiential travel" or "alternative tourism". At a certain stage of tourism development, offers clearly different from the traditional ones began to appear in so-called "anti-tourism" formats. These are off-the-beaten-track and off-the-beaten-attraction journeys to lesser-known tourist destinations, where the most important value is the traveler's non-standard experience. This travel format, conceptualized by Joël Henry in 1990, became the first manifestation of the now growing phenomenon of personalization of travel services. In modern foreign literature, there are a number of researchers concerned with this very concept. It can be considered that today a wide range of terms describing the variety of forms of experiential tourism have been formed, some of which are discussed in the article. Current proposals for experiential travel are summarized in the article, and more than 30 forms of experiential travel grouped into eight types have been identified. The article also formulates the main principles of experiential travel and considers some problems with their positioning in the market. The tendency of the chronological transformation of the forms of experiential travel, manifested by the transition from the notion of "alternative" to the idea of "conceptual" tourism, is discussed.

Keywords: experiential travel, alternative tourism, immersion in the environment, non-standard experience, conceptual trends in tourism.

Ներկայացվել է՝ 03.03.2023թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 05.05.2023թ.